ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/104

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Եվրոպա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթ, եգոզայի, փշալարերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ «Եվրոպա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1155-2020 գրության հիման վրա, 09.04.2020թ.-ին «Եվրոպա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 09.04.2020թ.-ին:

10.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/104 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.05.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1155-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Վիշկա» ՍՊ և «Եվրոպա» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակիցներ): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ., և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: Մասնակիցները հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել են բանկային երաշխիքների արտատպված (սկանավորված) տարբերակները, սակայն մինչև 25.03.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չեն ներկայացրել

իրենց կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովումների բնօրինակները, ուստի 01.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակիցների հայտերը:

Կից ներկայացվում են Մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1265-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) «ԵՎՐՈՊԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից), տեղեկացված լինելով ՀՀ տարածքում գործող սահմանափակումների և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների մասին, այնուամենայնիվ 19.03.2020թ. ներկայացրել է հայտ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ., իսկ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»:

Մասնակիցը հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքների արտատպված (սկանավորված) տարբերակները, սակայն մինչև 25.03.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովումների բնօրինակները, ուստի 01.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակցի հայտը:

Հայտնում եմ նաև, որ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստն սկսվել է 24.03.2020թ. ժամը 10:00-ին և ավարտվել 01.04.2020թ.: Հաշվի առնելով, որ մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում հարկ է եղել օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար, ուստի վերոնշյալ նիստը տևել է 6 (վեց) աշխատանքային օր: Այսինքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն խախտվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 21-րդ կետի պահանջները:

Ինչը վերաբերում է ՀՀ Պարետի 24.03.2020թ. N 15 որոշմամբ ընդունված հանրային իշխանության մարմինների գործունեության նկատմամբ սահմանված սահմանափակումներին՝ ՀՀ ՊՆ գնումների հետ կապված գործառույթների անխափան իրականացումն ապահովելու համար ՀՀ ՊՆ գնումներին մասնակցող բոլոր անձնաց հնարավորություն է տրվել ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն և ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ պահպանելով հակահամաճարակային անվտանգության պահանջները:

Հարկ եմ համարում նշել նաև, որ Մասնակցի ներկայացուցիչը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն ներկայացել է 26.03.2020թ., սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետների խախտման պատճառով ներկայացուցչի ներկայացրած փաստաթղթերը չեն ընդունվել:»:

3. <u>«Եվրոպա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Եվրոպա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 14.04.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Եվրոպա» ՍՊ ընկերությունը:

Համաձայն ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի 07.04.2020թ.-ի պետի գրության ուղղված ՀՀ ՖՆ առաջին տեղակալ Կ. Բրուտյանին, նշվել է որ 25.03.2020թ.-ին ժամը մինչև 17.00-ն «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել բանկային երաշխիքի վերաբերյալ փաստաթղթի բնօրինակը և հիմք ընդունելով նշյալը 01.04.2020թ.-ին մերժել մասնակցի հայտը:

Նախ կցանկանայի անրադառնալ ՀՀ ՊՆ 01.04.2020թ-ի հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշման հանգամանքներին: Այսպես

1. Ըստ ՀՀ ՊՆ 24.03.2020թ-ին ժամը 10.00-ին կազմված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով գրառված է հետևյալը. Մեջբերում «Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով ընթացակարգի հայտի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 24.03.2020թ-ը և «Վիշկա» ՍՊԸ-ն և «Եվրոպա» ՍՊԸ-ն մինչև 25.03.2020թ. ժամը 17.00-ն գնահատող հանձնաժողովին չեն ներկայացրել իրենց կողմից բանկային երաշխիքի ձևովներկայացված հայտի ապահովումների բնօրինակը, ուստի 01.04.2020թ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթ ացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժվել է «Վիշկա» ՍՊԸ-ի և «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտերը»:

Այս պարբերության ռաումնասիրության ժամանակ ի հայտ են գալիս մի քանի հակասություններ:

- *Նախ ինչպես կարող էր հանձնաժողովի 24.03.2020թ-ին ժամը 10.00-ին կսղացված արձանագրության մեջ նշվել, որ 25.03.2020թ ժամը 17.00-ն ներկայացրել իրենց կողմից բանկային երաշխիքի ապահովումների բնօրինակը,*
- *Այնուհետև 01.04.2020թ գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժվել «Վիշկա» ՍՊԸ-ի և «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտերը:*

2. Ավելին ՀՀ ՊՆ-ի կողմից նշյալ գրությունը ՀՀ ՖՆ ուղարկելու պայմաններում անտեսվել է ևս մի կարևոր հանգամանք, այն է. ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն ՀՀ-ում «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» որոշմամբ սահմանված դրույթները և 24 մարտի 2020 N 14 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» որոշմամբ նախատեսված դրույթները: Համաձայն նշյալ որոշման ՀՀ Պարեպի կողմից սահմանվել էր գործունեության ծավալման սահմանափակումների վերաբերյալ ցանկ:

Այսինքն, Ընկերությունը 25.03.2020թ-ին դեռևս հստակ դիրքորոշում չուներ աշխատանքային գործունեություն ծավալելու մասով և իր գործունեությունն իրականացնում էր հեռավար/առցանց եղանակով, ինչպես նաև առկա էր վտանգ իր աշխատակցին ՀՀ ՊՆ գործուղելու մասով:

Նկատի պետք է ունենալ նաև, որ ՀՀ Պարեպի 24.03.2020թ-ի թիվ 15 որոշմամբ ևս սահմանափակվել էին հանրային իշխանության մարմինների գործունեությունը {Հանրային իշխանության մարմինների գործունեության նկատմամբ սահմանել հետևյալ սահմանափակումները՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության բոլոր մարմինների գործունեությունը հնարավոր բոլոր դեպքերում իրականացնել հեռավար/առցանց եղանակով միաժամանակ ապահովելով մարմնի գործառույթների անխափան իրականացումը.

2) հանրային իշխանության բոլոր մարմինների վարչական շենքերում արգելել աշխատակիցների մուտքը, եթե առանձին աշխատակիցների վերաբերյալ առկա չէ մարմնի ղեկավարի ցուցումը.

3) ժամանակավորապես դադարեցնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների սպասարկման գրասենյակների գործունեությունը, իսկ դրա անհնարինության դեպքում սահմանափակել դրանց գործունեությունը էապես նվազեցնելով աշխատանքային ժամերն ու անձնակազմի թիվը: Առցանց ծառայությունների առկայության դեպքում ծառայությունները մատուցել բացառապես էլեկտրոնային եղանակով իսկ դրա անհնարինության պարագայում անհետաձգելի անհրաժեշտության դեպքում

4) քաղաքացիների անհետաձգելի կարիքներին արձագանքելու նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պաշտոնական կայէջերի, սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել մարմինների գործող հեռախոսահամրների, կայքէջերի, էլեկտրոնային փոստի հասցեների և կապի այլ միջոցների վերաբերյալ տվյալներ.)

ՀՀ Պարեպի կայացրած որոշմամբ և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 874-Ն հրամանի հիմքով նշյալ ցանկի պարզաբանման համար Ընկերության իրավաբան Վահե Սաղաթելյանի կողմից 24.03.2020թ-ին իրականացվել է հարցում ՀՀ վարչապետի

աշխատակազմին: Ի պատասխան նշյալ հարցմանը թվագրված 25.03.2020թ (փաստացի գրության պատասխանը ուղարկվել է 29.03.2020թ., սակայն գրության պատասխանի վերաբերյալ նախօրոք 26.03.2020թ-ին հեռախոսազանգի միջոցով հայտնվել է դիմումատուին) հայտնվել է հետևյալը «Ուսումնասիրելով Ձեր գրությունը՝ հայտնում ենք, որ Ձեր գրության մեջ նշված շինանյութի մեծամանրածախ առևտուրը հնարավոր է ՀՀ Պարետի՝ ս.թ. մարտի 27-ի N 19 որոշմամբ թույլատրված 46.7 և 47.9 կոդերի ներքո»:

Ստանալով (հեռախոսազանգի միջոցով) նշված պատասխանը Ընկերության ներկայացուցիչը 26.03.2020թ-ին ՀՀ ՊՆ ներկայացրել է պահանջվող գրության բնօրինակը, սակայն վերջինիս մերժել են այն ստանալու գործում:

Այդուհանդերձ, ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ներկայացվածը գտնում եմ, որ «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից բանկայինն երաշխիքի բնօրինակի ներկայացումը ՀՀ ՊՆ 25.03.2020թ-ին որևէ ազդեցություն կամ հետևանք չէր կարող ունենալ քանի որ Ընկերությունը նշյալ մրցույթին չի ճանաչվել հաղթող և գրանցվել է ցանկի չորրորդ տեղում:»:

«Եվրոպա» ՍՊԸ-ն 21.04.2020թ.-ի ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԼՕ-2020/104 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) պահանջը «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Պատվիրատուն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գրությամբ մատնանշել է հետևյալ փաստական հանգամանքը՝ Մասնակիցը թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» գնման ընթացակարգի շրջանակում չի ապահովվել հրավերի պահանջները, մասնավորապես մինչև 25.03.2020 թվականի ժամը 17:00 չի ներկայացվել բանկային երաշխիքների բնօրինակները:

Գտնում եմ, որ սույն Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

1. Արդյո՞ք Մասնակցի մեղքով խախտվել են հրավերով ներկայացված պահանջները կամ առկա են անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներ.

2. Արդյո՞ք Պատվիրատուի կողմից արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ և պահպանվել են Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ և 42-րդ կետերի պահանջները.

3. Արդյո՞ք գնման գործընթացում Մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է իր մեղքով, գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը չկատարելու արդյունքում, թե՞ Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողության արդյունքում է դադրեցվել Մասնակցիհետագա մասնակցությունը գնման գործընթացին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին ՝ հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա

մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների

կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը: Իսկ ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Մասնակցի ստանձնած պարտավորության խախտման արդյունքում պետք է առկա լինի նաև Պատվիրատուի կողմից գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցումը, որը իր հերթին պետք է իրականացվի համապատասխան ընթացակարգով: Մասնավորապես հրավերի պահանջների անհամապատասխանության արձանագրման արդյունքում Հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով պետք է կասեցվի, Մասնակիցը պետք է ծանուցվի արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ, նրան հնարավորություն տրվի կասեցման ժամանակահատվածում շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, որի չշտկման դեպքում նոր միայն հայտը գնահատվի անբավարար և մերժվի: Պատվիրատուի գործողությունների ոչ իրավաչափ կատարումը կարող է հանգեցնել գնման գործընթացին մասնակցի մասնակցությանը սակայն ոչ իր մեղքով, այս պարագայում պարտապանը պարտավորությունը չկատարելու համար

ազատվում է պատասխանատվությունից մեղքի բացակայության հիմքով, իսկ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կողմը պետք է ապացուցի արտակարգ հանգամանքներով պայմանավորված անհաղթահարելի ուժի առկայությունը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ մասնակցի մասնակցությունը գնման գործընթացին դադարեցվել է Հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, այսինքն եթե առկա էր՝ հրավերի պահանջների վերաբերյալ անհամապատասխանություն՝ բացակայում էին բանկային երաշխիքների բնօրինակները, ապա Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով պետք է կասեցներ նիստը, իսկ քարտուղարը նույն օրը ծանուցեր մասնակցին, ով պետք է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկեր արձանագրված անհամապատասխանությունը և միայն մասնակցի կողմից արձանագրված անահամապատասխանությունը չշտկելու դեպքում Հանձնաժողովը կարող էր Կարգի 42-րդ կետի հիմքով մերժեր մասնակցի հայտը: Ավելին նշեմ նաև, որ Ընկերության կողմից մինչև 25.03.2020 թվականի ժամը 17:00 բանկային երաշխիքների չներկայացնելը պայմանավորված է եղել կատարման անհնարինությամբ և բացակայում է Ընկերության մեղքը, այսինքն առկա է մեղքի բացակայության երկրորդ հիմքը:

ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի թիվ 298-Ն ՀՀ-ում Արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշման և դրա հիման վրա ՀՀ Պարետի 24.03.2020 թվականի թիվ 14 որոշման հիման վրա ՀՀ ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվել են սահմանափակումներ, այդ թվում «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերության գործունեության նկատմամբ: Ուստի նշվածով պայմանավորված արտակարգ դրություն հայտարարելու իրավական ռեժիմի հիմքով ՀՀ Պարետի կողմից սահմանափակվել է Ընկերության գործունեությունը, որը հանգեցրել է պարտավորության խախտմանը, որտեղ բացակայում է Ընկերության մեղքը, ուստի եթե Հանձնաժողովը առաջնորդվեր Կարգի 41-րդ և 42-րդ կետերի դրույթներով մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը հնարավորություն տալով Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները, ապա արտակարգ դրության պարագայում ծանուցելով շտկման եղանակի մասին կգործեր ըստ իրավիճակի և մասնակցին կհայտներ արձանագրված անհամապատասխանության շտկման մասին, որի պարագայում Ընկերությունը այն չկատարելու հիմքեր չուներ, քանզի էլեկտրոնային եղանակով դրա բնօրինակի Ականավորված տարբերակը արդեն իսկ ուղարկել էր:

Ուստի պատասխանելով սույն գործով էական նշանակություն ունեցող հանգամանքներին և պարզաբանման ենթակա հարցերին, գտնում եմ, որ.

1. Մասնակցի կողմից հրավերի պահանջները չեն խախտվել իր մեղքով քանզի այն պայմանավորված է եղել ՀՀ ողջ տարածում արտակարգ դրության իրավական ռեժիմի հիմքով տնտեսական գործունեության նկատմամբ կիրառված սահմանափակումներով.

2. Պատվիրատուի կողմից արձանագրվել է հրավերի պահանջների վերաբերյալ անհամապատասխանություն, սակայն Կարգի 41-րդ հոդվածի համաձայն մեկ աշխատանքային օրով չի կասեցվել նիստ և մասնակցին շտկման հնարավորություն չի տրվել.

3. Վերոհիշյալ կետում նշված Պատվիրատուի ոչ իրավաչափ վարքագիծը հանգեցրել է գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը ոչ իր մեղքով, այսինքն Մասնակցի հետագա մասնակցության պատճառը ոչ թե ստանձնած պարտավորության չկատարումն է, այլ Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունները:

Առաջնորդվելով վերոգրյալով խնդրում եմ մերժել ՀՀ պաշտպանության նախարարության պահանջը «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու՝իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Կից ներկայացվում է սույն դիրքորոշման օրինակը Պատվիրատուին ուղարկելու փաստը հավաստող ապացույց:»:

«Եվրոպա» ՍՊԸ-ն 06.05.2020թ.-ի ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն թիվ ՍՑ-ԼՕ-2020/104 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված դիրքորոշման հայտնեմ, որ սույն գործով էական նշանակություն ունեն նաև հետևյալ հարցերը.

> թե՞ արդյոք, երբ է տեղեկագրում հայտարարվել թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթը և,

> թե՞ արդյոք, երբ է ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը հրապարակվել տեղեկագրում,

Նշված փաստերի ուսումնասիրման արդյունքում պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումը.

> արդյո՞ք ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը, մինչ մրցույթի հայտարարելը հրապարակված չլինելը՝ առանց իրավական հիմքի

կազմակերպված գնման կարող է բացասական հետևանքներ առաջացնել մասնակցի համար, թե՞ ոչ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ տեղեկագիր նույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է. պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ Փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Նույն կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը

պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների սղանում կատարվում է լրացում:

Նույն կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Նույն կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար կատարվող գնումների դեպքում սույն ենթակետով նախատեսված ժամանակացույցը հաստատվում է գնման պահանջի ծագման օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում: (...):

Նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: (...):

Նույն կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ գնման գործընթացի իրականացման համար նախևառաջ պետք է իրականացվի գնումների պլանավորումը, որը երկու աշխատանքային օրվա ընթացքում պետք է հրապարակվի տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, որից հետո նոր միայն կարող ենք արձանագրել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի առկայության փաստը: Իսկ այն դեպքերում երբ առկա չէ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը, գործ ունենք Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների հետ և գնման ընթացակարգը ենթակա է չկայացած հայտարարվելու, որով պայմանավորված բացասական հետևանքների իրավական բեռը կրում է Պատվիրատուն, քանզի առանց իրավական հիմքի կազմակերպված գնման գործընթացի արդյունքում ձևավորված հանձանաժողը իրավազոր չէ և նրա որոշումները իրավաչափ չեն և չի կարող առաջացնել պարտավորություններ մասնակիցների համար և բնականաբար նաև պատասխանատվության հիմքեր: Իսկ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Օրենսդիրը նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ այն դեպքերում երբ, գործ ունենք առանց իրավական հիմքի կազմակերպված գնման գործընթացի հետ, որտեղ ընդհանրապես պետք է բացառել հանձնաժողովի ձևավորումը, և արդյունքում նրա կողմից կայացված ցանկացած որոշման ոչ իրավաչափ լինելը, ուստի նման պարագայում մասնակցի կողմից, առանց իրավական հիմքի կազմակերպված ոչ իրավաչափ գնման գործընթացի շրջանակում չեն կարող ստանձնվել պարտավորություններ և արդյունքում հնարավոր չէ արձանագրել դրա խախտում, ուստի և բացառվում է նշված պարագայում

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրե/ հետևյալը, որ ՀՀ պաշտպանության նախարարության գնումների պլանը ըստ պետական բյուջեի գործառնական դասակարգման ծրագրերի հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի gnumner.am կայքի գնումների պլաններ բաժնում 02.03.2020 թվականին, իսկ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտարարություն հրավերը հրապարակվել է 11.02.2020 թվականի, այսինքն ավելի վաղ քան գնումների պլանավորումը: Հաշվի առնելով նշվածը պետք է փաստել, որ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստի առանց իրավական հիմքի կազմակերպված գնման գործընթացի արդյունքում ձևավորված հանձնաժողը իրավազոր չէ և նրա որոշումները իրավաչափ չեն և չի կարող առաջացնել պարտավորություններ մասնակիցների համար և բնականաբար նաև պատասխանատվության հիմքեր: Նշվածով պայմանավորված առկա չէ Ընկերության կողմից ստանձնած որևէ պարտավորության իրավական հիմք, ուստի դրա խախտման մասին խոսելը անհիմն է և առկա չէ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու:

Առաջնորդվելով ինչպես 22.04.2020 թվականի այնպես էլ սույն դիրքորոշմանն վերոգրյալով խնդրում եմ մերժել ՀՀ պաշտպանության նախարարության պահանջը՝ «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

Կից ներկայացվում է սույն դիրքորոշման օրինակը Պատվիրատուին ուղարկելու փաստը հավաստող ապացույց:»:

4. <u>ՍՑ-LO-2020/104 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից եգոզայի, փշալարերի ձեռքբերման նպատակով 11.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 24.03.2020թ.-ի ժամը 10:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Եվրոպա» ՍՊԸ-ն:

«Եվրոպա» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 18.03.2020թ.-ին տրամադրված թիվ 127-52 և թիվ 128-52 բանկային երաշխիքների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ նաև՝ Երաշխիք):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Եվրոպա» ՍՊԸ-ն մինչև 25.03.2020թ.-ը ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը 01.04.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ.-ը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ «Եվրոպա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից եգոզայի, փշալարերի ձեռքբերման նպատակով 11.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ.-ի ժամը 10:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Եվրոպա» ՍՊԸ-ն թիվ 3

հավելվածով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի կողմից 18.03.2020թ.-ին տրամադրված թիվ 127-52 և թիվ 128-52 բանկային երաշխիքների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հանձնաժողովի 24.03.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Եվրոպա» ՍՊԸ-ն մինչև 25.03.2020թ.-ը ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը 01.04.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ.-ը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվել են սահմանափակումներ, այդ թվում «Եվրոպա» ՍՊԸ-ի գործունեության նկատմամբ, ուստի նշվածով պայմանավորված արտակարգ դրություն հայտարարելու իրավական ռեժիմի հիմքով Պարետի կողմից սահմանափակվել է

մասնակցի գործունեությունը, որը հանգեցրել է պարտավորության խախտմանը, որտեղ բացակայում է «Եվրոպա» ՍՊԸ-ի մեղքը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից 25.03.2020թ.-ին բանկային երաշխիքի բնօրինակ տարբերակը գնահատող հանձնաժողովին հանձնելն եղել է անհնարին՝ պայմանավորված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Անդրադառնալով Մասնակցի կողմից 06.05.2020թ.-ի ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ նշված՝ Պատվիրատուի կողմից Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Կարգի 16-րդ ու 17-րդ կետերով սահմանված պահանջների խախտմանը, ապա Բողոքներ

քննող անձը հարկ է համարում փաստել, որ բողոքարկմանը (ընթացակարգին) ներգրավված մասնակիցների երաշխավորված իրավունքները սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, Կարգով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով: Այդ նորմատիվ ակտերով է ապահովվում նաև ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու իրավունքը և այդ իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալները, որպիսիք չպահպանելու արդյունքում կխախտվի բողոքարկմանը (ընթացակարգին) ներգրավված կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:

Ամփոփելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ բողոքարկման (ընթացակարգի) քննությանը ներգրավված մասնակիցները պետք է իրենց վերապահված իրավունքները, օրենքով սահմանված բողոքարկման (ընթացակարգի) 30-օրյա քննության ժամկետում, իրացնեն այնպես, որ որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ընդ որում՝ հարկ է փաստել, որ «Եվրոպա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հրապարակման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը (ժամանակացույցը) հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում 04.05.2020թ.-ին, որպիսի պայմաններում ընթացակարգի քննությունը, ըստ էության համարվել է ավարտված, իսկ օբյեկտիվ, լրիվ և ճիշտ որոշման կայացման համար և դրան ուղղված գործողություններն էլ՝ սպառված:

Ուստի, նման պայմաններում, Մասնակցի կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված լրացումը Բողոքներ քննող անձը քննարկման առարկա չի դարձնում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ «Եվրոպա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2020/104 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ